

« Գիրք մեծագին և պատուական տկան
« և աշոց պեպես հոնքստկան և կենդանու-
« կան քարանց հասե իօրանց հրահայեիսց
« և զսեւազան ազնուագոյն իրաց »

վերնագիրը: Ռաւական ընդարձակ գործ
մ'է. կը խօսի մանրամասն պատուական
կոչուած բոլոր քարերու յատկութիւննե-
րուն և ազդեցութիւններուն վրայ, և ունի
նաև վերջը բառացուցակ մը, յորում նա
կը դնէ գիրքին մէջ գործածուած բոլոր
բառերը, անոնց հանդէպ գրելով՝ որոշ ու
մեկին բացատրութիւններ:

*

ՏԻՐԹ. ՎԱՆԱՄ Յ. ԹՈՐՈՍԱՆԱՆ

Զեռագրին դառնալով՝ կը տեսնենք որ
իր պարունակած քարերը շատ քիչ են
Գէորգ Պալատեցիին ցուցադրածներէն, մա-

նաւանդ շատ ալ աղքատ՝ նկարագրութեան
ու բացատրութեան տեսակէտով:

Յայտնի չէ նաև, թէ անանուն խմբագիրը
որ հեղինակներէն քաղած է այս բոլորը,
որ կ'աւարտի 38րդ էջին վրայ, որուն
անմիջապէս յաջորդին վրայ կը սկսի
Ապոստոյի Մարդակազմութիւնը մեծա-
պէս համառօտուած և նօտրագիր խոշոր
գրերով 18 թերթերու մէջ ամփոփուած,
որու մասին աւելի խօսելու հարկ չեմ
տեսներ, քանի որ արդէն սոյն մարդա-
կազմութեան երեք ուրիշ օրինակները բա-
ւական խօսեցուցին մեզ:

Վենետիկ — Ս. Ղազար

14 Յունուար 1923

(Շարունակելի)

Գ Ր Ա Կ Ա Ն

Պ Ա Յ Ր Ը Ն Ե Ա Ն Զ Ի Թ Ե Ն Ի Ք

Ի Ս. ՂԱԶԱՐ

Զ ԵՄ նըւագեր յիշատակաց այն բըլուրն
Ուր մարդն — Աստուած սարսուռներուն տակ դժնէ
Մահուան, մեղքին զագիր՝ հեծեց, հառաչեց,
Աստուածային արին, արցունք թափելով:
Մըխիթարայ մեծ դաստակերտը լըճին
Թող սըլանայ ու թեւածէ ոգիդ վեհ
Լուս և անհուն խորհուրդներով առլըցուն
Անդորրանքի, միայնութեան հովտին մէջ.
Պիտի զըտնես նագելագեղ ափին մօտ
Բարձրաւանդակ մը փոքրիկ. հոն կ'ամբառնան
Խաղաղութեան սուրբ ըստուերներ սիգանհմ
Զորքս տնկեց դիւթուած քերթողը պանդուխտ,
Այն Լորտ հանճարն որ հաճոյք, ցաւ, միշտ փորձեց,
Եւ նոյն իսկ օր մ'եղեռնաւոր մարդու պէս
Մութ զընդանին մէջ փակուեցաւ, յուզումի՝

Եւ մահազոյժ սարսուռներու տենչանքով:
 Բայց մահերգակ բանտն իրեն չէր պարգեւեր
 Ձընաշխարհիկ խաղաղութիւնը, որուն
 Իր միտքը վառ, սիրտը խռով ի ինդիր՝
 Յուպ ի ձեռին ծով ու ցամաք էր կտրեր:
 Սիւր մը յանկարծ շնչեց սրտին հրատապ.
 Սիրաստացւոյն ձեռակերտէն էր անդորր,
 Ուր դար մ'առաջ բոյն էր դրած մազապուրծ
 Արեւելքի փոթորիկէն աւերիչ:
 Սլացաւ իսկոյն կոնտուլայով խրոխտապանծ
 Երջանկութեան կղզւոյն ափերն ողջունել,
 Եւ ալեւոր Հարց տեսքը լուռ ու վըսեմ
 Պատմեց անոր Արեւելքի ոգին վեհ:
 Սիրեց ապրիլ յաւերժական դիւթանքով,
 Հեզամիջիկ ալեաց օրօրը լըսել.
 Յափշտակուած բնութեան զեղով՝ նա տեսաւ
 Հեռու ափեր, ազատութեան մարտեր գոռ,
 Գաղափարի և զէնքերու յաղթանակ:
 Ու ափին մօտ կերտեց չքնաղ հանգըրուան
 Յայգախոհի և նորլնջեան պահերուն.
 Ալիքն ոտքին, սիւքը ճակտին մրտախոհ
 Տըւին համբոյր, ու նա անհունն երազեց,
 Մըխթարեան հընոցին մէջ հրաբորբոք
 Ուր կը ձուլուին իրրեւ ոսկի կամ արծաթ
 Վեհ հոգիներ սուրբ կըրօնքի, հայրենեաց՝
 Ներշնչուեցաւ Լորտ քերթողն ալ խորապէս:
 Լարեց քնարն իր թրթըռուն ու երգեց
 Բնութիւնն ու սէր բիւր ձայներով ներդաշնակ,
 Խտալիան «ճաճանչ դարուց անցելոց»
 Ու հանճարներն անոր փառքին անկապուտ:
 Մինչ սուրբ կըրօնն իր խռով սրտին ձօնեց զիւր,
 Հայրենիքի հեղձամղձուկ հառաչանքն
 Ազդեց զգուանք անոր մտքին արփաթեւ.
 Ազատութեան կայծն երկնային հրդեհեց
 Իր էութիւնն համակ. սլանալ անպայման՝
 Հելլենական հանճարներու տարփանքով
 Վերականգնել հին փառքերու դարբնան
 Հոմերական ու սոփոկլեան շիրիմներն
 Իր արիւնով սրբել անրիժ անարատ.

Հանճարներու, Մուսաներու ճետերուն
 Պինդ շղթաները գերութեան խորտակել,
 Թեոփն ողջոյն Սուրբ Դազարու նա կու տար.
 Ռազմի դաշտին տեսիլը զինքն էր դիւթած,
 Դիւցազնի մահ՝ հոն լոկ կրնար ձեռք ձգել:
 Պատրաստ էր նաւն առաջատուով ուռուցիկ.
 Կը չըւէր Լորտն յուզումներով, յուշերով...
 Վերջին հայեացք մ'ալ ձգեց նա, ու գոչեց.
 « Խաղաղութեանն այն՝ զոր հոգիս ըմբոշխնեց
 Ձրնաշխարհիկ այս կղզեկին անկեան մէջ՝
 Վերկայ, քարոզ թող ըլլայ սուրբ ձիթենին
 Ու հովանի ընէ այն քայլ մը հողին
 Ըզմայլումիս յաւերժական յիշատակ »:
 Ըսաւ, զնաց ու մեկնեցաւ նա անդաճ...

Ու դար մ'անցաւ, հոս կը հսկեն ձիթենիք.
 Խաղաղութեան սօսաւիւնով կը նուազեն
 Մեծ կղզիէն հոս ուխտաւոր այցելուին՝
 Անմահ Լորտին երգերն, յուշերն ու խոհերն:

Հ. ԵՂԱ ՓԵՅԻՆԵԱՆ

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

Առաքելոց վանքի կոլիւր — Պատմեց Զօր. Ամ.
 դրամիկ. Գրի առաւ Լ. Կ. Լիւլէնեամ. —
 տպ. «Պայքար»ի Պօսթոմ — 1924.

Վիպական արկածներու հոգեգրգիւ հրապոյրն
 ունի այս 79 էջոց գրքոյկը. շատ պարզ է ոճը,
 գրեթէ անմշակ. Օճախի առջև պատմուածք է,
 ուր ոգեւորած զինուորը իրենց քաջութիւն-
 ները կը պատմէ հայրենասէրի հպարտութեամբ:
 Այդ էջերուն մէջ կուսակցական ոգոյ մը ոչ
 խորխտանքը կայ և ոչ դիտումաւոր նպատակ:

Սպիտակ էջերուն մէջ ցանուած է հայ ցեղի
 հարազատ որդիներու վարդաբոյր արիւնը, արդար
 վրէժի սուրբ կրակը: Էջեր կան որ հայրենասիրի
 մը աչքերէն ջերմ արցունք կը խլեն, իրենց
 գրաւիչ դէպքին համար, մեռող քաջերու
 զուարթ անձնագոհութեան համար:

Հոն համառօտակի նկարագրուած է վանքը,
 աւտր բազմադարեան խաչը՝ որ անսասան կը

հսկէ քաջերու խուճին վրայ սուրի և հուրի
 դէմ:

Զօր. Անդրանիկի դերը վեհ և անխռով առիծի
 մը կերպարանքն ունի, իւր քաջութեամբ և հան-
 ճարով ամէն վտանգ սարդոստայնի պէս կը կտրէ
 կ'անցնի:

Կիսարի հոգւով մեծցած ճշմարիտ զօրավարն
 է, որ կը բաժնէ իւր զինակիցներուն հետ վը-
 տանգն ու քաջութիւնը, մահն ու յաղթանակը:
 Ան վեհանձն է իր ուտքը խոնարհող ոսոխին հան-
 դէպ. շանթ մը՝ դիմագրաւողին դէմ:

Թող մայրեր պատմեն իրենց զաւակներուն
 այդ նուիրական կոխը, հայրենիքի և ընտանիքի
 պատին և ու սեմը արթնցնելու համար: Եթէ
 այդ դիւցազներու կուրծքերը դիւ չեն պսակուած
 ոսկի և արծաթ մետաղներով, բայց Մասեաց
 վարդազեղ արշալոյսը միշտ պիտի գայ թարմ
 համբոյր տալու անոնց կարմրած սրտին:

Հայրենիքը դեռ շատ կարօտ է դիւցազներու
 և Անդրանիկի. դեռ մեր նուիրական ուխտը չէ
 կատարուած. ըլլայ Գալակցական ըլլայ Պոլ-
 լեիկի, պէտք է հոն հաւաքօրինք և մեր օճախը